

գրութեան ժամանակին հետ միաբանել։ Սակայն տնտեսի չէ բաւել, թէ կամ Կիրակոս ժամանակագրական կարգ պահած չէ անդ, թերեւ Յովհ. Օձնեցու ժամանակ պատահած դէպքը շփոթելով անկէջ շատ տարիներ վերջ եկող Անանիա Մոկացւոյ ժամանակին հետ. և կամ Խոսրովու վերագրուած ըլլան Օձնեցու անյայտացած ճառերը, մեզի անյայտ նպատակաւ մի։ Առաջին են թագրութիւնն եթէ ասոյդ համարինք, այն ատեն յայտնաւ կը լինինք, թէ ո՞վ է այն անանուն հայրապետն՝ առ որ ուղղած է Խոսրով իւր աղաջին թուղթն, և թէ ինչո՞ւ համար այնքան յանդուրժարհամարումօք կը շեշտէ հետեւեալ փոքրերը « Գրով զձերն առ իս առաքեցէք խոստովանութիւն, 'ի ձեռն գրոյ և զպատասխանին ընկալլիք յինէն զայրորդի համաձայն... Կարծէր 'ի գրեցոցն մերոց առ նա՝ ընդ հնոց օգուր Կարաղանգութեամբ զմեզ արկանել... մանաւանդ զի և պարզեալ զնա կամեցաք, 'ի պատասխանաւ կանացն անտի նորայոց առ մեզ գրեցելոց, թէ զի՞նչ խորհիցի. 'և ո՞ւմ ամեք արդեօք ձայնակից գտանիցի. և է՞ր այս. ո՞չ ինչ պետս ոռնի առ քաղնորդի՝ որոյ աչք իւր ասողչապէս կարիցեն նկատել. և ոչ վարդապետի ոռնեք կարօտաւսցի որ զանուշարն սիրեցէ գտանել հաշատոցն բան »։

Խոսրովիկի մասին՝ այսչափս կը բաւէ. իսկ անոր գրուածոց պարունակութեան և վարդապետութեան մասին, այսինքն թէ, է՞ իրացնէ միաբանակ ոմն կամ հակաբաղկեդոնեան՝ եթէ ընդ հակառակն հասկանալի է, կը թողունք գրուածոց հրատարակութեան ժամանակին, եթէ փափաքեն երբեք սիրողը և յարգողը մեր նախնեաց գործերուն հրատարակուած տեսնել զայն։

Հ. ԲԱՐՍԵՂ ԱՐԿԻՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՖԱՅԻ

ՎԵՐԱԳՈՒՄԱՆ ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅ-ԿԱԹՈՐԱԿԱՅ

(ՏԵՍ ԴԷՂ 109)

ԺԱ

ԹԷՆՈՂՈՍԻՈՅ մեծ հրապարակին միջալայրը, ուր երբեմն շքեղափայլ կանգնուած էր առ Գենուացւոյը Սուրբ Ազնէս եկեղեցի Փրանկաց, և ապա բազմագմբէթ մզկիթ մայմանաց, այժմ շինուած է վայելչաձև մայր եկեղեցին Ռուսաց. յարեւրակողմն կայ միւս ալ փոքրագոյն հրապարակ, և հարաւային ճակատը մի խորհրդատու շէնք, որոյ վրայ առաջին անգամ նայողը՝ խառնուրդ մը կը գտնէ քրիստոնէութեան կրօնի և իսլամութեան։ Թաղթեմեաւ քառակուսի շէնքը, որոյ վերայ լայնատարած կաթուղիկէն՝ իբրեւ հակայի մը զըլ-

խոյն համեմատ փեղուքի մը զարդարուած, քովի բարձրադիտակ մօրայն, այս ամէնը մտիմանութեան յայտարար նշանակք են. այլ ինչպէս ի ծայր կաթուղիէին՝ մեր փրկութեան նշանը, նոյնպէս և մօրայն խաչապսակ՝ կ'աւետեն որ այլ շէնք տաճար է քրիստոնէից:

1783ին երբ Ռուսը կը տիրեն թէոգոսիոյ, շատ սրբութեան յաճախաց հետ նաև Հայոց կաթողիկոսաց թագաւորի եկեղեցիք՝ պատերազմական շփոթից միջոց քանդուելով կը կործանին: Եւ որովհետև Հայոց մեծամասնութիւնն 1778ին թողլով զՂրիմ գաղթեալ էին յեկատարիսլաւ, միացեալ սակաւութիւն Հայք միաբանելով ընդ Փրանկաց կը խնայեն ի նշտարինաց Բ կայսրունոյ որ իրենց եկեղեցի շտրոնի այլ մզկիթը, որ ի ժամանակին միաբանի ձաւիսի անունը կը կրէր: Կայսրունիին՝ որովհետև թաթարք և թուրքք, թողլով քաղաքը աւերակաց կոյտ մի՝ կը քաշուին կը հեռանան, անտէր և անսողովուրդ մնացած երկու մեծագոյն մզկիթներուն մին կը շքնորհէ Ռուսաց. և միւսը՝ վերը յիշուած միաբանի ձաւիսիին՝ կաթողիկոսաց ընդհանրապէս: Կաթողիկէ՝ շէնքին արտաքին ձեւը նոյն կը պահեն, միայն մահկին տեղ խաչը փոխանակելով. իսկ ներքին կողմը կը յարմարցընեն քրիստոնէական պաշտամանց պատշաճական արդուզարդին համեմատ, ի միջալայրին՝ ուր էր միհրապը, սուրբ սեղան մը կանգնելով ու Աստուածամօր պատկերը զետեղելով: Այս կարևոր փոփոխութենէն հինգ տարի վերջը, 1787 օգոստոսի 22ին, մեծահանդէս շքով կ'օծէ զայն յեկեղեցի կաթողիկոսաց՝ Ռուսաստանի համօրէն կաթողիկոս մետրապոլիտն Ստանիսլաւ Գեր. Սեստրենցեւիչ Բողոյ:

Գեղեցիկ է աւագ խորանին ճարտարապետութիւնն. ինչպէս ընդհանրապէս սուրբ տաճարին շէնքը, նմանութիւն մը բերելով եւրոպական եկեղեցեաց, թէպէտև արուեստական անփառունակ պարզութեամբն շատ հեռի կը մնայ անոնցմէ: Ընտիր և ճաշակաւոր են նաև երկու կողմնական խորաններն՝ զոգաձեւերու մէջ ազուցած յորմին, զեղեցիկ և թանկագին պատկերներով. մին նուիրեալ յանուն սրբոյն Անտոնի Պատուացոյ, և միւս սրբոյն Յովհաննու Նեպոմուսկին, երկուքն ալ նկարուած ի մայրաքաղաքին Փրանկիոյ, ի մեծանուն և ի ճարտարարուեստ Բէցղման ռուս նկարչէ. որոյ զօրծ է և խաչելութեան պատկերն՝ կախուած ընդ մէջ երկու խորանաց, աւագին և սրբոյ Պատուացոյն խորանաց:

Եկեղեցւոյս առաջին ժողովրդապետն եղած է՝ ոմն Օգոստինոս քահանայ ճէննատի, գեներալի, ազգաւ խալաքի: Ինք եղած է, ինչպէս կը վերկայէ ի կուսն արձանագրութեանց մատենին եկեղեցւոյ, հիմնադիր Օտեսսայի կաթողիկոս եկեղեցւոյն. և ապա առաջին ժողովրդապետ ի թէոգոսիա յամի 1807 ի 24 նոյեմբերի. և շարունակեալ է ի նոյն պաշտաման մինչ ի վերջ 1819 տարւոյն: Միմֆէրուպոլի քաղաքի ժողովրդապետի անդամք ալ յիշատակուած և արձանագրուած կը զաննեք զինքը: Նոյն ատենուրէնէ մնացած եկեղեցական մատենից մէջ՝ ճէննատի քահանայէն ետքը՝ Եր-

կու կաթոլիկ հայազգի քահանայից անուանք այ կը յիշուին. և են տէր Գր-
րիգոր Կոսիկեան և տէր Սահակ Յովնանեան որ ի յատուկ ստորագրութեանն
կ'անուանէ զինք ժողովրդապետ եկեղեցւոյն Եւպատորիոյ (Կէօզէլ)։ Կայ
և Խաչատուր կանոնիկոս վարդապետ մը Տուհայեան՝ ժողովրդապետ եկեղե-
ցւոյն Խարասուի։

1819ին առաջին անգամ մուտ գտած է Թէոդոսիոյ եկեղեցւոյն արձա-
նագրութեանց մէջ՝ հայ լեզուն. որ և այսպիսի սկզբնաւորութիւն ունի. «Ես
Հ. Պօղոս Տէրվիշեան՝ քահանայ եկեղեցւոյս Քաֆայի ուղղափառաց» և
այլն։ Ինքն էր յովսէփ Անտոնեան հարց որ ի Լիբանան, և ժողովրդապե-
տական պաշտօնը կատարած է մինչ ի 1826։ Հետեւեալ տարիէն կը սկը-
սուին արձանագրութիւնքն ուսն լեզուաւ, ի ձեռն հոգաբարձուի եկեղեցւոյս
Հ. Աթանաս քահանայի խօսիկեան մինչև ի 1830. աստի մինչ ի 1832՝
եկեղեցւոյն և ժողովրդեան հոգևոր խնամքն և առաջնորդութիւն կը վարէր
քիչ մը յառաջ յիշուած Եւպատորիոյ և Սիմֆէրոպոլի ժողովրդապետ Յով-
նանեան քահանայն. իսկ 1832էն կը սկսին դարձեալ արձանագրութիւնքն
ի հայ լեզու Երեմեան տէր Յովհաննէս քահանային ձեռքով։ Մինչև ի
1840 ուրիշ քանի մի եկեղեցականք վարած են առժամանակեայ կերպով
զայդ՝ պաշտօն, և վերջապէս նոյն տարւոյն՝ Տարիոյ առաջնորդ Բժշկեան Հ.
Մինաս վարդապետի առաջարկութեամբ միմեակաւոր եպիսկոպոսէն ժողովրդա-
պետ դրուած է Հ. Յովսէփ Գարամուրզա վարդապետ։ Ամբողջ երեսուն տա-
րուան միջոց՝ մինչ ի մահն (1840—70), եռանդուն բարեպաշտութեամբ և
ամենուրեք հաճութեամբն և արժանաւոր մեծարանօք վարեց զայդ պաշտօն՝
բազմալատասակ և բազմամուտ վարդապետս, որ մայրենի հայ լեզուին հա-
ւասար յաշոգութեամբ կը խօսէր նաև իտալական, գաղղիական, ռուս, լեհ
և թուրք լեզուները. և Թէոդոսիոյ եկեղեցւոյս և ժողովրդեան բարոյական
զարգացմանն զատ մեծապէս նպաստաւոր երևցած նաև նիւթական բարուր-
ման։

1887 տարւոյն օգոստոսի 15ին մեծաշուք հանդիսութեամբ կատարուեցաւ
եկեղեցւոյս հարիւրամեակը՝ իր առաջին վիճակն փոխելէն ու կրկին քրիստո-
նէական սուրբ կրօնի պաշտամանց նուիրուելէն ետքը։ —

Եւս առաւօտեան ժամերգութեանց՝ յառաջ քան զմիջօրէ ժամը տասնին,
եկեղեցւոյն երեք զանգակներն իրենց քաղցրանուագ հնչմամբ շէն շէն կը
հրաւիրէին զհաւատացեալս՝ հարիւրամեակի կրկին յորելինի հանդիսին մաս-
նակից լինելու։ Ժամը տասնուկիսուն սկսաւ սուրբ պատարագն. հնչեց եր-
գեհոն նուիրական մեղեդեօք, և կը ձայնակցէին զպիւրք իրենց անոյշ եր-
գերովն։ Առաջին աւետարանէն անմիջապէս ետքը՝ ժամաբար քահանայն
դարձաւ առ խնեալ բազմութիւն հաւատացեալ ժողովրդեան, և շնորհաւո-
րելով հարիւրամեակը, համառօտի յիշեցուց նոյն նուիրական շէնքին պատ-
մութիւնն ու կրած յեղափոխութիւններն. զորաւետեց արժանապէս նախորդ
ժողովրդապետին, Միսիթարեան Գարամուրզա Հ. Յովսէփ վարդապետին

գործունէութիւնն ու աշխատանք ի վայելչութիւն սուրբ տաճարիս. և զատ-
նալով զէպ ի սեղանն որ բազմաթիւ ջահերով և ծաղկըններով զարդարուած
էր «Ասոնք ամէնքն, ըսաւ, մեր հանգուցեալ ժողովրդապետին աստուածա-
նուէր եռանդեանն և փութոյն արդիւնք են» :

ԺԲ

ԿԱՖԱՅԻ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՅԻՆԳ ԵԿԵՂԵՑԻԲ

ՀԱՅՈՑ վերջին և մեծ գաղթականութեան համառօտ պատմութիւնն,
ոչ միայն ազգայնոց՝ Թաթարաց խումբերը ճեղքելով Վոլգայի եզերքէն մինչ
ի տաւրիկեան թերակղզին գալը կը յիշատակեն, այլ հարեանցի մէջ բերե-
լով նոցա ձեռքով եղած շինութիւնքն, կը հաւատարմացընեն թէ որպիսի՝
ընդարձակ ասպարէզ մը եղած է երկիրն՝ ընդ հուր և ընդ սուր անցած ժո-
ղովրդեան մը, իրենց բնածին հանճարով ու ճարտարութեամբ հանդիսանա-
լու : Ափսո՛ս որ կը Վալսին մեզ պատմական ամբողջ վաւերականք. որով
կը բռնադատուինք ցրիւ աստի անտի հաւաքուած յիշատակարաններով զո՛հ
ըլլալ : Այսպիսի գրուած մը ձեռուընիս անցաւ, գրեթէ հարիւր տարի յա-
ռաջ գրուած ի նոր Նախիջեւան, յորմէ կը տեղեկանամք թէ մինչև ան-
ցեալ դարուն վերջերը գեռ կանգուն մնացած էին ի Կաֆա քսանըչորս եկե-
ղեցիք, զորս յանուանէ կը յիշատակէ գրիչն : Մէջ բերենք այդ իրաւամբ
հետաքննական ցուցակը .

« Բէֆէ, կ'ասեն, մեծ քաղաք է .

Թագաւորաց հաստատած է .

Քսանուչորս եկեղեցի է .

Քաղերն ամէն սրբատաշ է :

Բէֆէ քաղաք ծովահայեաց ,

Եկեղեցիքըն զարդարած :

— Սոչրք Աննա բարձրը տեղ է ,

Աստուածածիւն անոր քովն է

Վարդապետաց օթարան է .

Համբարձոմն անկից վար է :

Սոչրք Թորոս բերդէն դուրս է .

Սոչրք Գեորգ ամենահաս է .

Հրեշտակապետ բերդէն ներս է .

Ամենեցուն բարեխօս է :
 Սոսր Նիկողոս սարի վրայ է .
 Սոսր Ակոբ հայրապետ է .
 Սոսր Խաչն անկից վեր է .
 Քրիստոնէից մեծ նըշան է :
 Սոսր Սարգիս յոյժ մեծ ժամ է .
 Մարտիրոս որդւովրն զինուոր է .
 Նախնեաց մերոց հաստատեալ է .
 Եկեղեցեաց աթոռակալ է .
 Սոսր Լուսառորիւ կաթողիկէ .
 Հաւատացելոց մեծ պարիսպ է .
 Հայոց ազգի հայրապետ է .
 Հերձուածողացն վանիլ է .
 Քէֆէ քաղաք ծովահայեաց
 Եկեղեցիքն զարդարած :
 — Սոսր Յարութիւն բերդի քով է .
 Քարէ խաչերն խիստ շատ է .
 Տասը սեղան շրջապատէ .
 Մէկ քան զմէկըն պայծառ է :
 Սոսր Աստուածածին նոր ժամ է .
 Չորեք կողմը Հայոց տուն է .
 Հաւատացելոց մեզ յոյս է .
 Դատաստանին բարեխօս է :
 Սոսր Անդոն փոքրիկ ժամ է .
 Սոսր Նիկողոս տեղըն տիւզ է .
 Սոսր Սիմեոն բերդէն դուրս է .
 Մէջի նահատակն երկուս է :
 Քէֆէ քաղաք ծովահայեաց ,
 Եկեղեցիքն զարդարած :
 — Սոսր Քառասունք աննըման է .
 Կաթողիկէն խանէ խանէ .
 Վերնատունըն բարձրման է .
 Երկոտասան աստիճան է :
 Սոսր Կարապետ տեղըն ձոր է .
 Քովըն կ'ասեն մեծ ջրհոր է .
 Սոսր Մերկիանոս տեղըն սար է .
 Քաջամարտ զինաւոր է :
 Սոսր Օվանէս պատըն ցած է .
 Չորեք կողմը պարբապած է .
 Սոսր Օգսենոս մեծ բլրիչ է :

Սոսր Օհաննէս տեղըն ձոր է .
 Կաթուղիկէն յոյժ յարմար է .
 Սոսր Ստեփաննոս վրկայ նախ է .
 Սա մէկ փոքրիկ մատուռ է :
 Սոսր Մինասն է զօրաւոր ,
 Նորաշէն գեղեցիկ տաճար է .
 Մէջըն կայ չորեսին կամար ,
 Ուխտաւոր երթայ անհամար :
 Քէֆէ քաղաք ծովահայեաց ,
 Եկեղեցիքըն զարգարած » :

Նոյն ձեռագիր՝ յորմէ այս տեղեկութիւնը քաղեցինք, կը յաւելու թէ
 Հայք՝ քառասուն և հինգ եկեղեցիք ունեցել են ի Կաֆա. քսանուինն՝ պա-
 րըսպին մէջ, իսկ տասնուվեցն պարսպապատէն զուրս : Այս բազմութիւ ե-
 կեղեցիք պիտի չկարծենք թէ մեծամեծ շէնքեր լինին. զի ի բաց առեալ
 մէկ քանին՝ մնացեալքն փոքրիկ մատուռներ են, ինչպէս կը վկայեն ցարդ
 մնացեալ աւերակք : Ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ նոյն ձեռագիր. « Օսմանցիի
 թագաւորն այսքան մոռնաբոհ խնդրեաց, տարւոյ տարի կու տայինք ամէն
 եկեղեցւոյ իւր կարողութեամբ. Ս. Սարգիս, տասնըմէկ ոսկի. Սան—փէթ-
 րօ մէկ ոսկի... Ս. Ուրբաթ՝ չորս ֆլորի... Ս. Երրորդութիւն՝ չորս ֆլորի,
 և այլն. կու ուղարկէին Ստամպոլ պատրիարքարանը. նա ալ թագաւորի
 դուռը կու տար, կ'ասէր թէ Ղըրմի եղեալ Հայոց ազգի եկեղեցիին մու-
 խաթտէն է : Այսպէս էր մեր տղայ եղած ու մինչև ի տարիս եկածը » :

Շարունակելի

